

բազմա չինական վերջին խոսվութիւններու հետեւանքով: Լոնտոնը նոր սպառնազիր մը ուղղեց Մոսկուային: Եւ գուցէ ի վերջոյ — բուլշևիզմի անդուլ, հականգլիական դաւերու հանդէպ — Լոնտոնի դիւանագէտները որդեգրեն լեհասէր քաղաքականութիւն մը, քանի որ հօօր, բարգաւաճ Լեհաստան մը Եւրոպայի սրտին մէջ լաւագոյն պատնէջն է, որը կրնայ ազատ պահել Անգլիան ու ամբողջ Արեւմուտքը բուլշևիզմի վտանգներէն:

Նոյն վտանգները թերեւս մղեն բրիտանական կառավարութիւնը՝ փոփոխելու իր նըպաստաւոր ընթացքը նաեւ հանդէպ Գերմանիայի, որ անդրդուելիօրէն կառչած կը մնայ Մոսկուային, անգամ Լօբարնոյի դաշնագիրը ստորագրելէ յետոյ:

Ուրիշ վարկած մը: Հնարաւոր է, որ նոյն ոտւական բուլշևիզմի յարաճուն սպառնալիքը Մեծն Բրիտանիոյ ասիական ծաւալումներու դէմ, ստիպեն ի վերջոյ Լոնտոնի վարիչները ձեռք առնելու կորովի միջոցներ Ռուսաստանը վերստին անդամատելու... Թեւ տալով, օրինակ, Ուքրայնայի անջատական շարժումներուն, Կովկասի եւ այլ ոտւասպատկան երկիրներու անկախութեան շարժումներուն...

\* \* \*

Կայ մի այլ կնճիւղ — Աւստրիան: Ան ալ կ'ուզէ միանալ իր արեւնակից Գերմանիային: Վերսայլի դաշնագիրը խտրու զատեր է երկու քոյրերը եւ միանգամ ընդմիջտ արգելիք անոնց միացումը:

Ճորանան կը սոսկայ Գերմանիոյ ծաւալելէն, Իտալիան կը սոսկայ, խորհելով, որ օր մը ինքը կարող է յայտնուել սահմանակից Գերմանիոյ:

Այդպէս պիտի լինի, եթէ կատարուի Աւստրո-Գերման միացումը: Այդ պարագային ուժեղացած Գերմանիան պիտի պահանջէ շրտկել նաեւ իր իտալական սահմանները, ուր կ'ապրի գերման հոծ ու հայրենասէր բնակչութիւն մը: Այժմէն գերման աջակողմեանները կը պահանջեն այդ:

Եւ Մոսկուային կը սպառնայ: Մահմաններու փոփոխութեան սեւէ փորձ Բրեւնեբոյի մօտ՝ պիտի յարուցէ Փաշխտական զօրաշարժ:

Պայթուցիկ նիւթերը պատրաստ են, ու-

րեմն, նաեւ այդ կողմերում: Եւ այդ պատճառով Անգլիան դարձեալ ուրաք չըբաւ Լօբարնոյի մէջ իր պաշտպանութեան տակ առնելու նաեւ ավստրո-իտալական ներկայ սահմանները. Ան ոչ մէկ իրական երաշխիք չտուաւ Իտալիային, բացի Ազգերու Լիկայէն, որը, սակայն, շատ յուսալի երաշխիք մը չէ:

Ոչ մի ոյժ; ի հարկէ, չի կարող արգելիլ միանգամ ընդմիջտ, որ եօթ միլիոն ավստրիացի ժողովուրդը, ցեղով, լեզուով, գրականութեամբ, մշակոյթով այնքան սերտ կապուած գերման ժողովրդի հետ, օր մը միանայ այդ վերջինին: Գրեթէ բոլոր արեւմտեան երկիրներու աշխատաւորական հատուածները կողմնակից են այդ ձուլման:

\* \* \*

Դժգոհութիւն եւ խմորում — նաեւ Բալկաններու մէջ: Վասնզի պատերազմէն յետոյ կնքուած շարք մը դաշնագիրները — Վերսայլի, Սէն ժերմէնի, Թրիանօնի — չեն տուեր արեւմտեան եւ արեւելեան խնդիրներու արդարամիտ լուծումներ, այլ յաճախ աւելի եւս սրեր են անկիւնները, եւ բորբոքեր կրքերը:

Բալկանները դեռ նոյնն են — հսկայ վառօղատուն մը: Բուլղարիան, չարաչար պատժուած Դաշնակիցներէն, զրկուած բուլղարաբնակ Մակեդոնիայէն, մշակուած բուլշևիզմի փտախտով, կը զալարուի տազնապի մէջ: Յուսաստանը, կորսնցուցած Իզմիրը եւ հելլէնիզմի մեծահռչակ որբանները Անատոլիայում, խորտակուած քեմալիզմի հարուածներուն տակ, կորցրեր է հաւասարակշիռը եւ ճիզեր կ'ընէ վերականգնելու իր ոյժերը: Իւզո-Սլավիան, չափազանց մեծցած ի հաշիւ Աւստրիոյ եւ Բուլղարիոյ, չի կարող մարսել իր կլլած պատանները, Մակեդոնիան, Խորվաթիան, որ աւելի բարձր, աւելի կիրթ ու առաջադէմ, չուզեր հպատակուիլ Բեյքրատին: Ռումանիան կը անքայ սահմանակից Ռուսիոյ սպառնալիքին տակ, որ կը պահանջէ Բեսարաբիան...

\* \* \*

Թիւրքիան — որու բռնելիք դիրքը զաւոյ բախումներու մէջ մեզի համար ճակատագրական, մղձաւանջային հարց մըն է — կարծէք տակաւին կը տարուբերուի հակամարտ ազդեցութիւններու միջեւ: Կը թուի թէ ան ամենէն քիչ ռազմական խորթակներ ունեցողն է մեր